ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-987[1]-17.12.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՀՕ-269-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-269-Ն օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 9.** Օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետում «խաղատների և (կամ) շահումով խաղերի» բառերը փոխարինել «շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և բուքմեյքերային գործունեության» բառերով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ~~ՆԱԽԱԳԻԾ~~

Պ-987՝-17.12.2024-ՏՀ-011/~~Ø~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՀՕ-269-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-269-Ն օրենքի 2-րդ եւ 7-րդ հոդվածները ուժը կորցրած ճանաչել:~~

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-269-Ն օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 9.** Օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետում «խաղատների և (կամ) շահումով խաղերի» բառերը փոխարինել «շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և բուքմեյքերային գործունեության» բառերով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրը ~~2025 թվականի հուլիսի 1-ից~~:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-987-17.12.2024-ՏՀ-011/1) ԵՎ «ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՀՕ-269-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-987[1]-17.12.2024-ՏՀ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Հայկ Սարգսյան	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Պ-987-17.12.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագիծ	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկումների արդյունքում որոշվել է խաղային ոլորտի հարկային բեռի վերանայումն իրականացնել պետական տուրքի դրույքաչափերը բարձրացնելու միջոցով՝ առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Պ-987-17.12.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագիծը հետ կանչել և նախագծերի փաթեթին ավելացնել «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ:	**Ընդունվել է:** «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Պ-987-17.12.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագիծը հետ է կանչվել և նախագծերի փաթեթին ավելացվել է «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ:	**Ընդունվել է:**

2.	ՀՀ կառավարություն	«Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-269-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Պ-987[1]-17.12.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկումների արդյունքում որոշվել է խաղային ոլորտի հարկային բեռի վերանայումն իրականացնել պետական տուրքի դրույքաչափերը բարձրացնելու միջոցով, ինչպես նաև այն, որ «Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-269-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում առկա է վրիպակ՝ առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի «2-րդ և 7-րդ հոդվածները ուժը կորցրած ճանաչել» բառերը փոխարինել «9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 9.** Օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետում «խաղատների և (կամ) շահումով խաղերի» բառերը փոխարինել «շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և բուքմեյքերային գործունեության» բառերով:» բառերով:»:	**Ընդունվել է:** Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
3.	ՀՀ կառավարություն	«Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-269-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին»	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածում «2025 թվականի հուլիսի 1-ից» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը» բառերով:	**Ընդունվել է:** Նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

		(Պ-987[1]-17.12.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագծի 2-րդ հոդված			